Արցախ այցից հետո. Մշակույթի գործիչները կարեւորում են ՀՀ, ԼՂՀ եւ սփյուռքի միասնականությունը - թերթ, «Հայաստանի Հանրապետություն», Ե., 15.12.2016

(Հատված հոդվածից)

Մշակույթի գործիչները բարձր են գնահատում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած իրենց այցն ու Հայաստանի եւ Արցախի նախագահների հետ հանդիպումները:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը նշեց, որ առաջնահերթ կցանկանա իր գովեստի խոսքերն ուղղել ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանին՝ շատ լավ եւ հետաքրքիր կազմակերպված մտահղացման համար: Ամենից շատ նա տպավորված էր զինվորների հետ հանդիպումից:

«Իսկապես նրանց աչքերում փայլ տեսա: Այդպիսի շփումները շատ կարեւոր են զինվորների համար: Շատ կարեւոր էին հանդիպումները Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ: Շատ հետաքրքիր եւ մանրամասն հանդիպում է տեղի ունեցել: Մեր առաջարկներն արեցինք, իրենցը՝ լսեցինք»,–ասաց Արամ Իսաբեկյանը՝ հույս հայտնելով, որ ավելի հաճախակի կլինեն Հայաստանի եւ Արցախի մշակութային գործիչների միջեւ նմանատիպ հանդիպումները:

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20161215_18&flag=am